ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4563-Ա « 17 » սեպտեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի Հ.5775-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 08.09.2026թ. հ.20-Ել-61391 եզրակացությունը, ինչպես նաև քաղաքացի Վլադիկ Նաջարյանի 15.06.2026թ. հ.Դ-61391-26 դիմումը.

1.Երևանի քաղաքապետի 2011 թվականի նոյեմբերի 17-ի «Երևանի Նորագավիթի 9-րդ փողոցի հ.20/2 բնակելի տան և հողամասի նկատմամբ Վլադիկ Սաղաթելի Նաջարյանի իրավունքները վերականգնելու, 512.63քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.5775-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման նախաբանում, 1-ին և 1.1. կետերում՝ «812.63» թիվը փոխարինել «776.77» թվով.

1) Որոշման վերնագրում և 2-րդ կետում՝ «512.63» թիվը փոխարինել «476.77» թվով:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

4.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ